

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. Ռ. Ռ. Ջ. Ռ. Խ. Թ. Ե. Ա. Ն.

(Հարունակութիւն, տես 12 թիւ, 1871)

Միշտն:

Բազում են պատճառք փոփոխելց որբանութեան և որակութեան միջին, որով կարի գժուարին է հաստատել զորոշ կանոն ուղղապես դատելց զիւրաքանչիւր տեսակ ՚ինոցանէ:

Ծնարդել արձակումն միջին ունի զբազում օգուտոս առողջութեան, զի վտարէ ՚ի մարմնոյ զակեսպէս ախտս, վասնորոյ հարկ է ըստ ամենայնի ջանալ պահել զայն արձակ, և յամենայնէ, որ ինչ արդելու զայն, պարտէ ամենայն զգուշութեամբ ՚ի բաց կալ:

՚ինստողական կեանս երկորին ևս, կղկղանք և միզումն, յոյժ սպակաս գըտանին, ուստի և յառաջ գան պէս պէս հիւանդութիւնք, ՚ինչեն ՚ի փափուկ և չերմ անկողինս, չոր և ցամք բնութեամբ կերակութք, զօրաւոր և չերմ ըմպելիք, այսինքն օղի, մաղերս, պօրտօ, կարմիր գինի և այն, անկասկած նուազեն զորքանութիւն միջին. և յաւէտ զգուշանալ պարտին այնպիկ, որք ունին զիսիճ կամ զքար յերիկամունս և յերկուորիս:

Պահել զմէզն ընդ երկար՝ կարի վնասակարէ, քանզի երկար մնալով ՚ի փամիշտի՝ թողու անդ զթանձր և զաղուղինիւթս, որ ասկա սակաւ առստիկաւ քարանայ, և այս յաւէտ պատահի նստողական արուեստաւորաց և ուսումնասիրող անձանց, զորս բըցչիւլ գժուարին է:

Հւ որ ստէպ միզէ չափազանց քանակութեամբ է ՚ի պատճառ սըմպելց

յաճախակիզյոյժ թոյլջոյին ըմպելիս, որպիսի են թէյ, շաքարաջուր, լիմոնաջուր, կամ բաղմիցս ՚ի կիր առնելց զալքարեան աղև և զայլդլութիւն երիկամանց և հեղեղիչ արեան զնիւթս: Այս անկարդ գրութիւնն միզիննուազէ զմարմինն և պատճառէ զմարմացաւ: ՚ի բաց կալ յամենայն ըմպելեաց, որ ունիցի բգորութիւն գրգելց զանցու միզական, և առնուլ պարտէ միշտ զպնդացուցիչ կերակուրու և ըմպելիս, այսինքն կերակուրն իցէ մածուցական դալարիք, բրինձ սագու, և սաղափի եփեալ կաթամբ: ՚իսկ ըմպելին իցէ հիւթ բարկ և ՚ի տտիպ պտղոց կամ ՚ի դալարեաց:

՚աեւ ըստ չափու կարողութեան անձին առնուլ միշտ զկրթութիւն և ննջել միշտ ՚ի վերայ կարծր մահճի, զի փափուկ անկողինն վնասակարէ երիկամանց յոյժ:

Զերմ և չորօղն և ամենայն քըրտնաբեր ինչ յոյժ օգտակար է այս հիւանդութեան:

Վրանին:

՚նզգալի քրտունիքն, որ թէ շարունակ թորի ՚ի մարմնոյ, և բարեգոյն քան զայլ արձակմունս կղկղանաց մարմնոյ, որ և է յոյժ օգտակար առողջութեան: ՚իսկ սակաւ հիւանդութիւնք կամ վնասակար ախտք երեւին ՚ի մեզ, յորժամ այս թորումն մարմնոյ ընթանայ ըստ պատշաճի, բայց եթէ պատճառաւաւ իւիք արգելեալ լինիցի այն, կաղմուած մեր փութով անկանիցի ընդ անկարգութեամբ:

՚այց զի որովհետեւ այս բազմաշահ արձակումն քրտանց մարմնոյ չէ այն պէս զգալի, որպէս զայլ արձակմունս,

վասն որոյ և ոչ ըստ արժանիւոյն խնա
մարկի՝ կամ բնաւ ընդ մտադրու-
թեամբ անկանի , յորմէ և առանց
զգալց յառաջ գան ջերմն , հար-
բուղս , հազ , տենդ , յօդացաւու-
թիւն և այլ հիւանդութիւնք :

Յաղագս այսորիկ փոխանակ ման-
րակրկիտ քննելց զբնութիւն քըր-
տանց , զնորին վանազանութիւն ՚ի
զանազան եղանակի , կիմայի և ՚ի կազ
մուած մարդոյ , և այն , ջանացուք
յառաջ քերել զպատճառոն , յորոց
արդելեալ լինի այն , և անդէն ցուց-
ցուք , թէ զիարդ և օրով պարու է
ըստ ժամանակին զգուշանուլ յիւրա-
քանչւրոց ներգործութեանց , որք են
փոփոխութիւն եղանակի , թացեալ
հանդերձք , թացեալ ոտք , գիշերա-
յին օտ , փոփոխութիւն ցուրտ ե-
ղանակի ՚ի ջերմ եղանակ , կամ ներ-
հակ սորին , զօրոց խօսեցուք կարգաւ-

Փոդիուն-Ավան Եղանակի :

Ո՞ն ՚ի գլխաւոր պատճառաց ար-
գելց զբանունս կամ ըմբռնելց ՚ի
հարբուղս , ՚ի հազ , ՚ի փողացաւու-
թիւն , ՚ի ջերմ և ՚ի ստոնութիւն ,
է փոփոխութիւն եղանակի : ՞Քանզի
ցրտութիւն կամ ջերմութիւն , ժառ-
ցութիւն կամ չարութիւն , ոչ մի-
այն են կարի զանազան ՚ի զանազան
եղանակի , այլ է բազում անդամ փո-
խին ՚ի միջ սաստիկ եղանակէ առ
միւսն ՚ի սակաւ աւուրս , նաև երթեմն
՚ի միւսմ աւուր , որ յանպատրաս-
տից վնասէ առ ժամայն . վասն որոյ
բարեգոյն եղանակ ՚ի բարեխառնել
զմարմինն՝ առ ՚ի կարող լինիլ տանել
փոփոխութեան եղանակի , է յամե-
նայն աւուր եղանել արտաքոյ տան ,
և առնուլ զիրթութիւն ՚ի բաց օդի ,
ըստ չափու կարողութեան մարմիս :

Ծայշեալ հանդերձք :

Ոչ միայն սառնութիւն թացեալ
հանդերձլց արդելու զբանունս , այլ
և մարմինն ըմբռնեալ ՚ի խստութիւն
կամ ծծեալ զիսնաւութիւն զգես-
տուցն՝ անկանի ՚ի վտանգ մեծ , այ-
սինքն ՚ի սասափիկ ջերմն , ՚ի յօդացա-
ւութիւն և յայլ մահաբեր հիւան-
գութիւնս : Յայս վտանգաւոր դիս-
ուածոյ չէ ոք աղատ , ոչ պատանիք և
ոչ կորովիլ և քաջառողջ անձինք . վասն
որոյ հարկ է ամենեցուն զգուշանալ
յայս վտանգաւոր դիսգուածոյ :

Ի՞այց գժուարին է այս զգուշու-
թիւն այնոցիկ , որոց գործ և զբաղմունք
են արտաքոյ տան , և ինքեանք պարտա-
ւոր են միշտ ելանել ՚ի տանէ . սակայն
եթէ փոյթ տարցին , հնար է նոցա-
զգէմ ունիլ վտանգացն , այսինքն՝ ե-
թէ ոչ կարիցեն առ ժամայն փոխել
զմացեալ զգեստոն , հնար է նոցա-
տուլ զինքեանս պէս պէս շարժողու-
թեան մինչեւ ցամաքեսցին զգեստը
և մարմինն գտցէ զիւր առաջնին նո-
րոգութիւն :

Ծայշութեան որից :

Ծայշութիւն սաից բազում ան-
դամ պատճառէ զպէսպէս սասափիկ
հիւանդութիւնս , այսինքն ցաւ որո-
վայնի , բորբոքումն լանջաց և աղեաց-
իսիթ աղեաց , ոտնառ ութիւն , բոլե-
րայ և այն :

Ծէ և , որ սովոր է այսմ , ոչ այն-
չափ վնաս կրէ , բայց և հարկ է ըղ-
գուշանալ յատկապէս նոցա , որք են
փափկասուն և տկարամարմին , որոց
վնասէ կարի փութուլ : Ոչ է աղատ
՚ի վնասուց և որ բոկ ոտիւք շրջի ՚ի
վերայ խոնաւ գետնոյ յատկապէս յը-
զի կին :

Գիշերային օդ :

Քրտունքն բաղում անդամ արգելեալ լինի ՚ի գիշերային օդոց , յատկապէս յանարան և զանակի , յորմէ զգուշանալ պարտ է յոյժ . ՚ի միմանալ ջերմադոյն աւուրց առատ իջանեն ցողը և վտանգաւոր առնեն ըդգիշերային օդն , իւ այս ՚ի ջերմութայրս առաւել վտանգաւոր է քան ՚ի բարեխառն կլիմացու :

Այս ցանկալի է ամենեցուն յոյժ , զիսի ջերմ աւուր յերեկոյեան վոքը մի զովացուցանել զինքն շրջելով արտաքոյ տան ՚ի բաց օդի , բայց ովոք ցանկայ առողջութեան իւրոց բարեզ է ՚ի բաց կալ յայսմբերկրալի վայելութենէ . կամ եթէ չկարէ , մի ելցէ առանց վերարկուի և ծածկեալ ունելով զգլուխն յատկապէս ՚ի լրացուսնի :

Իրաւ է , զի ներգործութիւն երեկոյեան ցողց չէ այնչափ զգալի , բայց և ոչ է աներկիւղ ՚ի վնասուց , վասնորոյ եթէ ձանապարհորդք , եթէ մշակք և բեռնակիրք և եթէ այլ ծանրը աշխատասէրք , որք զջերմութիւն աւուրն բարձին տքնութեամք , պարտին զգուշանալ յոյժ ՚ի գիշերային ցողց , որովհետեւ այսպիսիք առաւել քրտնին և մեծ ևս է վտանգ նոցա :

Իւ այս վտանգաւոր է յոյժ ՚ի տեղին , ուր գետինն տափարակ է և ձափնային , և ուր են ագարակք որիզոց և ցանկ պէսպէս դալարեաց . զի արտաշընցութիւն գոլսրշեաց միացեալ ընդ օդոց՝ վնասի ; բնակչացն պէսպէս ախտիւք և վտանգաւոր հիւանդութեամբ :

Իւ այս զգուշութիւն պարտ է ունիլ և վասն խանաւուտ տան , սենեկի , անկողնոց և բնակարանի , ուր հանապազ նատին կամ գործեն :

Փոդունութեան ջերմ եղանակի առ յուրաք ,
Ե՞՛ յբոյ առ ջերմ եղանակ :

Օսյցանէ արդէն խօսեցեալ եմք ուրեք ուրեք ՚ի նախընթաց գլուխան և ցուցեալ եւս զվանգան , յորոց ճագիլ ունին , ընդ նմին և զմիջոցան , առ ՚ի զգուշանալ յայնց , զորոց կրկին խօսիլ աստ անդէպ համարիմ : Ախայն յաւարտ բանիս աւանդեմ ամենեցուն զայս պատուական խրատ , ասացեալ ուրումն ներհուն բժշկի վտանգանելոյ զառողջութիւնն : Վարդ , ասէ նա , որ վայելէ զբարեբաստիկ ողջութիւն , չէ պարտ միանգամայն հաստատել զինքն առ յատկացեալ կանոն ինչ կեցութեան , այլ պարտ է նմաս ստէպ փոխել զայն , այսինքն երբեմն անցուցանել ՚ի բաղաքի և երբեմն ՚ի գիւղ , երբեմն ՚ի յորս և ՚ի զբոսանո , երբեմն ՚ի ձանապարհորդութեան ծովու և ցամաքի , երբեմն տալ զինքն ՚ի տքնութիւն և երբեմն ՚ի հանգիստ , բայց առաւելապէս յանձնամարզ կրթութիւն :

Չէ պարտ նմաս մերժել զտեսակս կերակրոց , զօրս հասարակութիւնն ՚ի կիր առնու , և ոչ փոյթ տանիլ եթէ երբեմն շատ կերիցէ և երբեմն սակաւ , երբեմն ընդունիլ պարտ է զոք ՚ի հացկերոյթ և երբեմն խորչիլ ՚ի մառնէ : Վաւ է նմաս յաւուրն երկիցս ձաշելքան միանգամ և եթէ , զօր ինչ կարէ դիւրեաւ մարսել կերիցէ ՚ի սրտէ և ախտրժանօք , զի զզուանօք ուտել ինչ , կամ կարծիք անառողջ կերակրոց՝ անկասկած վեասէ : Չէ պարտ նմասատիկ տենչանօք զհետ լինիլ իգական սեռիցն և ոչ միանգամայն հրաժարիլ ՚ի հաղորդութենէ նոցին :

Հուսկ ամենայնի պարտ է կան խաւ ամենայն խոհականութեամբ

մոտադիր լինիլ բարւոք և վայելուչ կեցութեան, ՚ի բաց կալով յամենայն չափողանցութենէ, որով մնասցէ առողջութիւնն անելզ և անտարկան և կարողութիւն կազմուածոցն յաւուր հիւանդութեան՝ նմա օգնական ու :

ԴժուԱՐԱԲՈՅՏ ԵՒ ԱՆԲԺՇԿԵԼԻ ՀԻՒԱՆԴԱԹԻԹԻԿԻՆՔ

Ուէ և ՚ի նախորնթաց գործ մեր, ՚ի կարգադրութիւնս առողջութեան, ՚ի զանազան գլուխս ծանուցեալ եղեն պատճառք պէսպէս հիւանդութեանց և միջոցք դդուշանալոյ յայնց, սակայն անհնար է, եթէ ամենայն ոք ՚ի բոլոր կեանս իւր կարիցէ հսկել ընդ դէմ այնց ամենից վտանգաւոր պատճառաց ՚ի պահպանել զառողջութիւն իւր, Վասն որոյ հարկաւոր համարիմ յաւելուլ ընդ այնս քանի մի դժուարաբոյք և անբժշկելի հիւանդութիւնըս, որք են .

Օիւրական ախտ .

Ռորբոք ստամբքաց և փորստեաց .
Կոլերա մորբիւս .

Կարօտութիւն ախտժակի .

Վիստ թանցից կամ որովայնալութութեան .

Խիճ կամ քար յերիկամունս և յերկուորխս .

Երիւնալուծութիւն որովայնի .

Գլսացաւութիւն .

Վշացաւութիւն .

Շնչարգելութիւն .

Կաթուած կամ անդամադօսութիւն .

Զ զային տկարութիւնք .

Զ բդողութիւն .

Դ ինութիւն .

Յ օդացաւութիւն .

Վ շնորհական ծանօթութիւն վասն չերմախտութեանց հանդերձ ցուցանելով զորպիսութիւն իւրա-

քանիշւր հիւանդութեան, զպատճառն, զնշան հիւանդութեան, զըդգուշութիւն և զմիջոցան կամ զդեղ զիւրելոյ կամ բժշկելոյ հիւանդութե, յուսալով զի որք ցանկան առողջութեան իւրեանց, նախ՝ փոյթ տարցին տալ միշտ քաջ դիտողութեան իւրեանց զայս դայն վասակի մեր, և ըզգուշանալ ՚ի պատճառացն առ ՚ի ազտամնալ յայնց ախտից : Եւ երկրորդ՝ եթէ, Տէր մի արացէ, մի և միւս եղանակաւ լմբռնեացի ոք յայնս, ունի ցի ՚ի ձեռն պատրաստ զկարգադրութիւնն նշանակեալ ՚ի նսանի վարելոյ զկեանս առ ՚ի զիւրութիւն կամ ՚ի բժշկութիւն հիւանդութեան :

ԳԼՈՒԽ Ա.

ՕՌ-Շահն պիտ :

Վ յս անտանելի ցաւ հիւծէ եւ մաշէ զբոլոր մարմինն, պատճառեալ ՚ի կեղալից պալարաց կամ ՚ի վլրաց թպքոյ, զոր անհնար է բժշկել :

Պատճառութիւն :

Վ յս ախտ յառաջ գայ ՚ի հարբը ըլիսային բորբոքմանէ լանջաց, յապականեալ վարսուց, ՚ի քոսէ կամ ՚ի բորսոյ, ՚ի շնչարգելութենէ, ՚ի յեսոդարձմանէ պիսակի կամ ծաղկի, ՚ի գաղղիական ախտէ, և այն : Վաև պատճառի այն յանաւողը օդոյ, ՚ի սաստիկ բարկութենէ, յանհնարին թաղծութենէ մասց, ՚ի կարի պարապմանէ խորաքննին և նորահնար արուեստից կամ գիտութեան, ՚ի յանկարծակի գաղտարմանէ սովորական արտաթորման, այսինքն արեան թըթից, տեռատեսութեան, քթի, թա-

բախոց վիրաց մարթոյ և այն ,
Եւս և յանկարծակի փախադրելոց
Կ չերժ կիմայէ առ ցուրտն . ՚ի փախե-
լոյ զի՞րմարար զգեստու առ նուրբ և
օդամուտն և կամ առ այլ ինչ , որ ար-
գելու զարտաշնչութիւն մարմայ :

Դարձեալ ուժգին երգեցողը , և
որք պատճառեն զաստիկ Ճնշումն
թորոյ , բազում անդամ են ընդունակ
այն ախտի :

Եւս և ՚ի զեղլութենէ , ՚ի գիշե-
րի յերկար արթնութենէ , ՚ի յըմ
պելոյ անչափ չերմ և զօրաւոր հե-
ղուկաց , ՚ի հաստղական կենաց , որոց կո-
րացմամբ նստելով թափոյն , պատճառի
այս ախտ , նաեւ . ՚ի ցրտութենէ , ՚ի
թացեալ սուից կամ ՚ի զգեստուց , ՚ի
խոնաւ անկողնոյ , յըմբոնմանէ ցրտու-
թեան զինի յոյժ չերմ լինելոյ մոր-
մացն , ՚ի կծու աղեալ և համեմեալ
մշտական կերպակրոց և յայնց՝ յորոց
պատճառի սաստիկ բորբոք արեան :

Ելանք այն Հիւանդութեան :

Այս հիւանդութիւն հասարա-
կապէս սկսանի չոր հազիւ , որ գրե-
թէ տեւէ ամիս ինչ : Ախտացեալն
զգայ առաւել քոն զավորականն չեր-
մութիւն և զցաւ ՚ի կուրծս , առա-
ւել եւս յորժամ առնէ զջարժողու-
թիւն ինչ :

Թուք նորս լինի աղահամ և եր-
բեմն խառն ընդ արեան , ճաշակ նո-
րս միշտ անախորժ և ծարաւ նորս
սաստիկ , զորկ բազկացն երբեմն ե-
րագ , երբեմն թօյլ և երբեմն լի և
խիստ : Այսորիկ են նշանք ՚ի սկիզբն
այսր հիւանդութեան : Ծետ որոյ հի-
ւանդն սկսանի թքանիլ կանաչտիսա-
ռըն , սպիտակ կամ արիւնախտառն
թարախս և մարմինն նուազի ՚ի ծիւ-
րական տենդէ կամ ՚ի հաշըզական բըր-

տանց , որք շարունակ տեւեն գիշեր
և ցերեկ , մին ընդ երեկո և միւ-
սին ընդ առաւ օտն : Ուծումն որո-
վանի և արձակումն միզին բազում
սնդամ գժուարաւ կատարին , որով
և հիւանդն նուազի յոյժ :

Վատունք ձեռացն նշանաւոր իմն
փորրկանան , եղնդունք կորաթեքին
առ վայր , և հեր զլսոյն սկսանի թա-
փիլ :

Հայց յորժամ ոտքն և ձեռքն սկը-
սանին ուռիլ , թափի ամենայն զօ-
րութիւն մարմնոյ նորա , ՚ի խոր անկա-
նին ակունք նորա , և ըմբռնի նա ՚ի
սաստիկ ցրտութիւն , ահա մերձեալ
է մահ նորա :

ՕԳՆ-Ը-ԲԵ-Ն:

Ի յերեւիլ նշանաց այսր հիւան-
դութեան , եթէ հիւանդն բնակի ՚ի
բազմամբոխ քաղաքի , կամ յայնպիսի
տեղւոջ որոյ շնչումն օդոյ չէ ազատ ,
հարկ է նմա առ ժամայն փախել ըդ-
բնակութիւն իւր առ տեղի ինչ ար-
տաքայ քաղաքի , ուր օդն շնչի ազատ
և է բարեխառն և աւողջարար , և
յամենայն առաւ օտու պարտ է առ-
նուլ անդ զիրթութիւն , որչափ և
կարող իցէ , որոյ բարեգոյնն է հե-
ծոնել ՚ի ձի . և եթէ զցոյ չկարէ առ-
նել , ձեմեսցէ սոխւք կամ ելցէ կա-
ռօք և շրեսցէ փոքր մի հեռագոյն :

Երկար ճանապարհորդութիւն ծո-
վու կամ ցամարի է կարի բարեյաջող
միջոց առ ողջութեան այսր հիւանդու-
թեան . զի փափոխութիւն զանազան
տեղեաց և առարկացից և տեսարան
ընութեան զրացելով զմիտս նորա ,
մեծ գիւրութիւն տացէ վհատեալ
մուցն և լքեալ որախին . միայն պարտ
է ամենայն արթնութեամբ զդուշա-
նալ յըմբռնմանէ ցրոյ , ՚ի թացւու-

զգեստուց, ՚ի խոնաւուտ անկօղնոյ և
՚ի գիշերային օդոյ և այլն :

Օքր տեսակ կրթութեանց և ի-
ցէ, պարտ է առնել զայն յառաւո-
տու և ընդ երեկո, յորժամսուամիքս
նորա գատարի է . զի յայլ ժամ ա-
ւուրն վեսասակար է : Այսպիսի հի-
ւանդ եթէ ոչ իշխեսցէ առնուլ եր-
կար ճանապարհորդութիւն, կարէ
երթալ ՚ի բարեխառն տեղի ինչ, ուր
ոչ կարի ջերմ իցէ և ոչ կարի ցուրտ,
և մնացէ անդ մինչեւ գտցէ զիատա-
րեալ առողջութիւն : Արդ զինի նշո-
նակելց զպատշաճ զգուշութիւն օ-
դոյ և կրթութեան, հարկ է և ըստ
արժանելոյն առաջի առնել զգիտողու-
թիւն կերակրոց և ըմպելեաց սոյն
հիւանդի :

Այս հիւանդին չէ պարտ ուտել
բնաւ զայնպիսի ինչ, որ իցէ ջերմա-
բնոյթ և գժուարամբս, և ըմպե-
լիք նորա պարտ է լինիլ մեղմ և զո-
վարար բնութեամի : Օի ամենայն
կերակրուր, զօր այս հիւանդ ուտէ,
պարտ է ունիլ զջօրութիւն վտարելց
զիծոււթին հեղուկաց մարմնոյ, բայց
և մննդարար իցէ և զօրացուցիչ հի-
ւանդին, յորոց օգտակարագոյնքն են
բանջարեղբն և կամքն, կամ լոկ կամքն
որ է առաւել առողջ և մննդարար
քան զամենայն կերակրուր :

Յոյժ օգտաւէտ է այս հիւան-
դութեան կամքն իշոյ, յաւուրն երի
ցըս կամ չըրիցս անդամ ըմպելով, և
յիւրաքանչիւր նուագ իբրեւ զչափ
քառորդ սրուակի, ընդ կտոր մի հա-
ցի . բայց եթէ ոչ գտցի կամքն իշոյ,
կամ չիցէ այն հիւանդին հաճոյ ըմ-
պել, բարեգոյն է առնուլ անեփ կա-
թըն կովու, և այս ըստ սրում առա-
ւել ծանր է կամ գժուարամբս,
պարտ է առնուլ զայն աստիճանաւ,
այսինքն ՚ի փոքրէ սկսեալ առ չափա-

ւորն, կամ խառնեսցէ ՚ի նա հաւասա-
րաչափ ջուր եփեալ գարւոյ :

Որիզ կամ գարի եփեալ կամամբ,
հասունացեալ պատողք, խորովեալ
կամ կամամբ եփեալ, քաղցրաւենիք
հասապտղոց, վարդի, շրտի, կեռասի
և այլն, են կարի պատշաճ կերակրու-
սցն հիւանդին :

Առողջ օդ, պատշաճ կրթութիւն
և յարմար կերակրուր կայացեալ գլսա-
ւորապէս ՚ի մեղմացուցիչ գալարիս
և ՚ի կամքն, բաղաւմ անդամ ողջու-
ցուցանեն զայս հիւանդութիւն ՚ի
նորոգ սկսանին . բայց յորժամ երկա-
րեալ է այն և յանփութութենէ
ծանրացեալ, ամենսայն ինչ անօդուտ
է : Հարկ է և պահել զմիտս այն հի-
ւանդին խաղաղ և ուրախ քանզի այս
հիւանդութիւն բաղաւմ անդամ
պատճառի ՚ի սաստիկ թաղծութենէ
մոտաց, վասնորոյ նուագ, երգ, ու-
րախ միաբանութիւն և այլ զուար-
ձալի զրօսանիք մեծ օգուտ ընծային
այսմ հիւանդութեան կահ չէ պարտ
թողուլ զայս հիւանդ միայնակ, զի
աարակուսեալ նորա ընդ արտամոլի
դրութիւն իւր, վատթարագոյնս առ-
նէ զցաւն :

Կցնապէս և պարտ է հիւանդին
զգուշնաղ ՚ի բարկութենէ եւ ՚ի
բորբոքմանէ վավաշոտական ախտից,
ոչք առաւել քան զմթոյն մահարար
ունին ներգործութիւն ՚ի վերայ սոյն
հիւանդութեան :

Եւ զի, որովհետեւ այս հիւանդ
՚ի սկիզբն վշտանայ ՚ի սաստիկ չոր հա-
ցէ, բարւոր է պատրաստել զգիւրա-
րար խառնուրդս միաչափ հիւթոյ լի-
մանի, մեղեր և օշարակի մեկսնի . յիւ-
րաքանչիւր չորս սնն (ունիի) ածեալ
՚ի մաքուր աման ինչ և եգեալ ՚ի վերայ
մեղմ հրոյ եփեսցի մինչեւ ՚ի թանձ-
րանալն . և ապա ՚ի կիր առցէ զայն

յորժամ սկսանիցի հաղալ յիւրաքանչ
շիւր նուագ մեծ զբգալ մի :

Կոյնովէս օշաբակ նցյ , ծաղկի
նարնջենոյ և կապալիէր , որք են յոյժ
օգուտ հաղի և կապգուրիչ կրծոց , յո-
րոց առցէ հիւանդն զայն , որ առա-
ւել հաճոյ իցէ ըմպել կամ օգուտ
ընծայեսցէ ինքեան :

(Ըստ Առաքելութեան)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

I. Պօլսոյ ազգային պարբերական
թերթերէն կը տեսնենք , որ կրօնական
Ժողովը Շնորհիւնը ջերմ վիճաբա-
նութեան տեղի տուած է Վագային
Արեափոխանական Ժողովին մէջ , թէ
ուր եղերած է մինչեւ յարդ վիճաբա-
նութեան արդիւնքն . ընտրաւած է
արդեօք կրօնական Ժողովն . և Բնէ
եղանակաւ , այս մասին վարժանական
լուր չունինք տակաւին : Իսյց Խոնդ-
րոյն կարեւորութիւնը կը ստիպէ ըն-
մել հրապարակաւ յայսնել մեր հա-
մոցումն , եթէ ոչ Արեափոխանական
Ժողովի ներկայ վիճաբանութեանը
հացնելու . (որ գուցէ արդէն լլումն
ստացած է) , գէթ ապագային մէջ նը-
կատողութեան և խելամտութեան ա-
ռատ նիւ թ մատակարարելու համար :
Եւ այս աւելի համապատասխան է մեր
բուն նպատակին , որ է ճշմարտու-
թեանը միայն պատկանիլ և ոչ այս
ինչ կամ այն ինչ կուսակցութեան :

Աեր Վագային Աահմանադրութիւնը
կրօնական Ժողով մի կը ներկայացնէ
մեղ , անդամոց քանակութիւնը եւ
պարտուց սահմանը համառօտիւ զը-
ծելով : Իսյց թէ համապատշաճ է

արդեօք սցն կրօնական Ժողովի կազ-
մութիւնն մեր Հայաստաննեաց Ակե-
զեցւոյ վարչական սգւոյն , և ազգային
է արդեօք իւր ծնունդն , թէ օտարո-
տի . այս պարագաները մի առ մի պար-
զելու համար , հարկ է նախ մեր Ակե-
զեցւոյ վարչական սկզբունքի յատուկ
նկարագիրը դիտել և ապա նոյն նկա-
րագրով ամեն բան քննել և գատել :

Ինդհանրսպէս խօսելով , ամեն
քրիստոնեայ ազգաց եկեղեցիներ , ոչ
այնքան վարդապետութեամբ , որչափ
վարչական սկզբունքով իրարմէ կը
տարբերին : Եւ վարչական սկզբունքը
խիստ և խիստ մեծ նշանակութիւն
ունի որ և իցէ եկեղեցւոյ քրիստոնե-
ական յառաջադիմութեան կամ յե-
տադիմութեան նկատմամբ , վասն զի ,
ինչպէս քաղաքական , նոյնովէս և եկե-
ղեցական վարչութեան եղանակներն
մեծ ազգեցութիւն ունին ժողովրդոց
լուսաւորութեան , բարօրութեան և
վարուց ու բարուց վրայ : Տիեզերական
պատմութեան մէջ կը տեսնենք ար-
դէն՝ թէ ինչ յեղյեղուկ վիճակի մէջ
կը ներկայանան մեզ քաղաքական վար-
չութեանց եղանակներն , մերթ նա-
հապետական , մերթ բանապետական ,
մերթ անկախ , մերթ սահմանեալ մի-
ապետական , մերթ հասարակապետա-
կան , այլովքն հանդերձ . և թէ քանի
քանի՞ յուղմունքներ և յեղաշրջու մներ
պատճառած են և կը պատճառեն ըն-
կերական աշխարհի զանազան դասա-
կարգերուն մէջ : Աակայն այս ամեն զը-
րութեանց և յեղափոխաւթեանց մէջ
ընդ հանուր միտում մի կը նշմարուի
ակներեւ , որով բացառիկ արտօնու-
թիւններն օր աւուր կը վերնան և ժո-
ղովրդական վեհապետութեան տար-
ըլ նշանակութիւն կը ստանայ թէ
պատմութեան , թէ օրէնսդրութեանց
և թէ վարչական եղանակներու մէջ :